

Ի. ԱՐՈՒԼԱՉԵ (Փիլոսոփական գիտությունների քեկնածու, ստալինյան բուսական):

ՔԱՐՔԼԻՍ ՑԻՈՎՐԵԲՍԻ ԿԱՄ ՎՐԱՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ ՅԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ:*)

«Քարթլիա Ցիովրեբայի» հայերեն խումբագրությունը, որ «Վրաց Պատմություն» վերնագիրն է կրում, մինչև հիմա ութ ձևազրույթ է հայանի: Սրանցից մեկը, որն աղագ. Մ. Բրոսեն թարգմանել է ֆրանսերեն և հրատարակել 1851 թ., պահպանվում է Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտում, մյուսը՝ Վենետիկի Մխիթարյանների գրադարանում, երրորդը՝ Փարիզի ազգային Մատենադարանում, իսկ մնացած հինգ օրինակները Հայկ. Ս.Ս.Ռ.Մ Մատենադարանի (Երևանում) սեփականությունն են կազմում:

«Քարթլիա Ցիովրեբայի», այսինքն՝ Վրաց Պատմության հայկական ձևագրերից հրատարակված է միայն Վենետիկի Մխիթարյանների ձևագիրը: Այս հրատարակությունը կատարված է 1674 թ. զբոսաշրջության ունեցող մի ձևագրի արտագրության հիման վրա, որը մի ժամանակ պատկանում էր Կարինի առաջնորդ Կարապետ Բագրատունուն, բայց հետագայում տեղ գտավ Էջմիածնի ձևագրերի հավաքածուի մեջ (№ 3070): Փարիզի ազգային Մատենադարանի ձևագիրը, այդ հիմնարկության հայկական ու վրացական ձևագրերի ցուցակագրող Mac-ler-ի աված տեղեկության համաձայն Dulaurier-ն է արտագրել այն ձևագրից, որից և Վենետիկի ձևագիրն է գալիս:


Ո՛չ միայն Վենետիկի և Փարիզի օրինակները, այլ և այն հայերեն ձևագիրը, որից Բրոսեն կատարել է իր ֆրանսերեն թարգ-

մանությունը, աղագ. Ն. Մասի աված տեղեկության համաձայն, Կարապետ Բագրատունու սեփական ձևագրից է արտագրված, Այսպիսով, վերոհիշյալ չորս ձևագրերն արտագրված են իրարից: Սրանց մեջ ամենահինը Կարապետ Բագրատունու օրինակն է, որը, ինչպես նշել ենք, այսօր պահվում է Հայաստանի Մատենադարանում (№ 3070): Մնացած չորս օրինակներից, որոնք նույնպես պատկանում են Մատենադարանին, վաղուց հայանի է № 1902, որն ըստ գրության, ամենահին օրինակն է: Աղագ. Մ. Բրոսեի որոշմամբ այս ձևագիրը զբոսաշրջության ունեցող մի ձևագրի ձևագրից է 1279—1311 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում¹): Մնացած երեքից՝ երկուսն անցյալ դարի օրինակներ են. մեկը, ինչպես մեր համեմատությունից պարզվեց, նույնպես Կարապետ Բագրատունու ձևագրից է արտագրված 1840 թ., վրացերեն ու ռուսերեն իմացող Արխատակես Երզնկյանցի ձևագրով, Թրիփսիում, իսկ մյուսը՝ № 3052 հայանի հայագետ պրոֆ. Բ. Պատկանյանն է պատրաստել, ըստ երևութին, տպագրելու համար: Վերջին, ութերորդ, օրինակը № 5501, որ 1683 թ. է գրված ինչպես պարզվեց Մատենադարանի մյուս ձևագրերի հետ արված համեմատությունից, ամենամատիկ հարաբերության մեջ է հնադույն ձևագրի (№ 1902) հետ: Ինչպես տեսնում ենք, բոլոր

¹) M. Brosset, Rapports sur un voyage archéologique etc., III rap., p. 62, SPB, 1849.

¹ Ձեկուցում՝ կարդացված Հայկական ՍՍՌ Ժողովածուների կից Ձևագրերի ուսումնասիրության ինստիտուտի (Մատենադարանի) զիտական սեփայի 1940 թ., 39-X հիստում:

վերսիշյալ ձեռագրերը, բացի Բ. Պատկանյանի ձեռագրից, գալիս են վերջ ի վերջու երկու ձեռագրից:



Ինչպիսի աննշություն կա սրանց միջև: Մասնագետների կարծիքով գոյություն ունեցող և մեզ հասած բոլոր ձեռագրերն առաջացած պետք է լինեն ամենահին օրինակից (№ 1902-А): Այդ կարծիքը նրանք հիմնավորում են այն բանով, որ ամենահին օրինակի վերջին թերթն ընդհատվում է այնպիսի բառով («նստուց»), որով վերջանում են նաև հետագա ժամանակների բոլոր ձեռագրերը: Ակադ. Ն. Մառը նկատել է այն հանգամանքը, որ հիշյալ ձեռագրի վերջին թերթը կարված է և այդ կարված թերթից առկերի սկզբի առաերի միայն մի մասն է երևում: Նրա կարծիքով այս թերթի վրա գե տեղված պիտի լիներ «Քարթլիս Յխովրեբայի» թարգմանության մի փոքրիկ մասն ու արտագրողի կամ ստացողի հիշատակարանը: Անշուշտ մյուս օրինակներն այն ժամանակ պիտի արտագրված լինեն, երբ ձեռագրից պահատել է վերջին թերթը, և ինչպես ակադ. Ն. Մառն է կարծում, հենց այս է պատճառը, որ հայերեն բնագրի բոլոր օրինակները վերջանում են նույն ընդհատված «նստուց» բառով: Այսպիսով, ուրեմն, գոյութիւն ունեցող բոլոր օրինակների համար գտնված է սկզբնաղբիւրը, այսինքն՝ 1279-1311 թվ. միջև գրված «Քարթլիս Յխովրեբայի» ամենահին հայերեն ձեռագրերը (№ 1902):

1) Н. Марр, Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей (Зак. мост. отд. РАО I. V стр. 211-241, СПб. 1891 (այս հոդվածը թարգմանված հայերեն, ա. «Հանգև Անսորյա» 18, էջ .).

Ակադ. Ն. Մառի հիշյալ գիտողությունը, որի համաձայն «Քարթլիս Յխովրեբայի» հայերեն տեքստն ընդհատված «նստուց» բացից հետո շատ չպիտի շարունակվեր, այլ քիչ հետո պիտի վերջանար, ինձ ճիշտ է թվում: Քարթլիս Յխովրեբայի» հայերեն տեքստը պիտի վերջանար Դավիթ Շինոպի պատմությամբ, այսինքն՝ վերջին աղբիւրը պիտի պատմեին Դավիթի մահվան և նրա ժառանգի դո՛ւ քարձրանալու մասին: Այս դեպքը նկարագրելու համար ինչպես երեւում է, բավական էին առաջին իսկ աղբիւրը. թե ինչու, այդ կտեսնենք հետո: Ինչ վերաբերում է ակադ. Ն. Մառի արտահայտած կարծիքին, որի համաձայն «Քարթլիս Յխովրեբայի» հայերեն տեքստից հետո գե տեղված պիտի լինէր արտագրողի հիշատակարանը, այդ կարծիքը կարող է ճիշտ լինել, բայց այս երևույթի կապակցությամբ պետք է նշել նաև այն, որ կարված թերթի առաջին էջի վրա մնացած տառերը գրված են տեքստից տարբերվող թանաքով և, որ հետաքրքրական է, այդ էջի աղբիւրի քանակը չի համընկնում տեքստի էջերի աղբիւրի քանակի հետ: Ուստի կարելի է եզրակացնել, որ կարված թերթի առաջին էջի վրա, «Քարթլիս Յխովրեբայի» վերջից հետո, կարող էր գե տեղված լինել հիշատակարան, որը կարող էր գրված լինել ոչ թե արտագրող գրչի, այլ ուրիշ անձնավորության կողմից: Այսպես թե այնպես, պարզ է որ 1. բոլոր օրինակները վերջանում են այն ընդհատված բառով, որով վերջանում է ամենահին ձեռագիրը (А) 2. խմբագրական տարբերություններ օրինակների մեջ չեն նշմարվում 3. ամենահին ձեռագրին ավելի շատ (А) հետևում է С օրինակը որը կարող է արտագրված լինել հենց նրանից (А). բայց իր հերթին աուրք է տալիս իր ժամանակի ուղղագրությանը: 4. В օրինակն էլ, որին հետևում են մնացած ձեռագրերը, ինչպես երևում է, А-ձեռագրից է արտագրված. С օրինակի նման նա էլ բնորոշվում է ուղղագրական տարբերություններով, բայց գլխավոր գտնադանությունն այն է, որ նա (В); տեղ-տեղ պակաս բառեր ու խոսքեր, ունի: Հիշյալ ABC օրինակների հետ միասին՝ վրաց

Պատմութեան տեքստը հրատարակելու համար կարելի է օգտագործել նաև Երզնկյանցի ձեռքով արտագրված (1) օրինակը:

Ձեռագրերի հիշատակարաններից ուշագրավ են հետևյալները: Ա ձեռագրի մեջ մի տեղ կարդում ենք՝

«Պատմութիւն Ղևոնդեայ և զիրքս Եւագրեայ, վերջին՝ Պատմութիւն Վրացեաց յիշատակ է Յովհաննու Կարճաւանցւոյ, որ փտեալ կայր. վերստին նորոգեցի և կազմել կառու սիրելւոյն իմոյ Շմաւոն վարդապետի Լօսեցւոյ, ի թվիս ՌՃԺԳ:...»

Ուրեմն այս ձեռագիրը մի ժամանակ քրքրված է եղել և 1664 թ. կազմել են ավել: Հետագայում այս ձեռագիրը պատկանել է Վարդան Բաղիշեցուն:

«Զստացող գրոյս, որ կոչի Ղևոնդ պատմագիր և սուրբ հօրն անապատականացն Եւագրի բանք և խրատք բազում, որ և Վարդան վարդապետս Բաղիշեցի ստացայ ի հալալ արդեանց իմոց և կառու յիշատակ ի դուն սուր էջմիածնի ի փրկութիւն հողւոյ իմոյ: Որք ընթեանուք և օգտիք ի սուրբ գրոցս յիշեցէք ի Քրիստոս զԲաղիշեցի Վարդան վարդապետն և զճնողսն իւր, ամէն: Ի թվին ՌՃԼԹ:»

Այսպես, ուրեմն 1664 թ. կազմված մեր ձեռագիրը 1690 թ. էջմիածնին է նվիրում գրքի ստացող Վարդան Բաղիշեցին:

Ե ձեռագրի հիշատակարաններից մեկը արտագրող Դավիթ ճնճղկի կողմից պատմում է, որ այս ձեռագիրը Վարդան Բաղիշեցու համար է եղել գրված 1669 թ.: Ինչպես քիչ առաջ բերված փաստերից երևաց, Բաղիշեցին ունեցել է մի ժամանակ և Ա ձեռագիրը, որից կարելի է այն շատ հավանական ենթադրությունն անել, թե այդ Ա ձեռագրից պիտի արտագրված լինեն այն երկերը, որոնք մտնում են Ե-ի մեջ: Իբրև ապացույց այդ բանի՝ կարելի է ցույց տալ այն հիշատակարանը, որը նույնութեամբ կրկնված է և Ե ձեռագրի մեջ՝ Ղևոնդ երիցու Պատմութեանից հետո:

Ը ձեռագիրն ևս, ինչպես արտագրող Միքայել երեցն է վկայում իր հիշատակարանների մեջ, գրվել է 1685 թ. Վարդան Բաղիշեցու հիշատակին:

«Գրեցաւ... յիշատակ հարդելի և բանիւրուն բարունապետ Վարդանի և Գրիգոր վարդապետի...»:

Վերահիշյալ վկայութուններից պարզվում է, որ մինչև Ը ձեռագրի արտագրութունը Բաղիշեցու դպրոցում Վրաց պատմութեանը պարունակող երկու ձեռագիր օրինակ կար (A և B), ուրեմն որից է արտագրված Ը ձեռագիրը: Համեմատութեանից պարզվում է, որ նա առաջ է եկել A ձեռագրից: Ինչպես B ձեռագրի, նույնպես և Ը ձեռագրի արտագրողը սուրբ է ավել իր ժամանակի ուղղագրութեանը, բայց բնագրի մյուս հատկութուններն այստեղ ավելի ճշտորեն են պահված, քան B ձեռագրի մեջ: Բաց թողված բաներն ու խոսքերն այստեղ ավելի քիչ են, քան թե Ե-ում:

Այսպես ուրեմն, XVII դարի այս երկու ձեռագրերը, իրարից անկախ, Ա-ից են գալիս, իսկ ավելի ուշ ժամանակի ձեռագրերը՝ Ե-ից: Այս վերջինից արտագրված օրինակի համաձայն է Վրաց Պատմութեանը՝ հրատարակված Վենետիկում 1884 թ. հետևյալ խորագրով՝ «Համառոտ Պատմութիւն Վրաց, ընծայեալ Զուանշէրի պատմիչի»:

Մեզ հասած բոլոր ձեռագրերը, ինչպես նշել ենք, իրենց վերջում ունեն թերութեան, որը սակայն մեծ չափաք է եղած լինի:

Բացի սրանից՝ թերութեան կա նաև գրքի մեջ: Արդեն հրատարակվել է և նկատել, որ Վախտանգ Գորգասալից հետո պատմված նյութի մեջ մի տեղ ուսուցում կա Փարսման II-ի թագավորութունը և Եվաթի կաթողիկոսութեանը հիշատակելուց հետո անհասկանալի թռիչք է կատարվում և սկսվում է կյուրապաղատներից մեկի պատմութեանը, որի իշխանութեան ժամանակ վախճանվում է Մամուկ կաթողիկոսը և նրա տեղն է գրավում Բարթոլոմէոսը: Այդ կյուրապաղատը Մտեփանոսն է: Համեմատելով հայերենի այս տեղը վրացերեն տեքստի հետ՝ պարզվում է, որ սրանից առաջ բաց է թողնված Փարսման II-ի որդու՝ Բակուրի ու նրա ժառանգորդ Գուրամ կյուրապաղատի պատմութեանը, իսկ հայրապետների շարքում չեն երևում Մակար և Միմեոն կաթողիկոսները: Ինչպես երևում է, այս թերութեանը թարգմանչի գործ չէ, այլ ար-

ապագայի: Որ սկզբնագիրը և մեզ չհասած հնագույն օրինակները հիշյալ կետերը պետք է պարունակեն, այդ կարող ենք հաստատել լրիվ օրինակից վերցրած քաղվածքներով: Մխիթար Այրիվանեցին, ինչպես հայտնի է, ունի վրաց իշխանների ու թագավորների և մյուս կողմից՝ վրաց հայրապետների ցանկ, որը, ինչպես գիտել են, կազմված է վրաց Պատմության հայերեն խմբագրության հիման վրա: Վերոհիշյալ վրաց թողնված անձնավորություններն այդ ցանկում կան, ուրեմն Մխիթարի ժամանակ ու նրա ձեռքի տակ եղել է վրաց Պատմության այնպիսի օրինակ, որը սկզբնագրի լրիվ ընդօրինակությունն էր ներկայացնում:

Հրատարակված «Քարթլիս Յխովրեբա» կամ «Վրաց Պատմություն» գրքի վերնագիրը վերցված է երևում հենց Պատմության մի հիշատակարանից, որ կցված է ինչպես վրացիներնում, այնպես էլ հայերենում, Քարթլիս Յխովրեբայի մեջ մտած Արշիլ թագավորի վկայարանությանը:

«Եւ դտաւ Պատմութիւնս համառաւա ի ժամանակս շիրթմանն և եղաւ ի գիրքս որ Քարթլիս Յխաւրեպա, որ է Պատմութիւն Քարթլայ. և եղիա դսա Զուանքեր, գրեալ մինչև ցՎախթանգ թագավոր, և մինչև ցայս վայր ինքն յավել Զուանքեր, և զգալոյն՝ յանձնեաց տեսողացն և պատահելոյն ի ժամանակին»:

Այս հիշատակարանից չի երևում, որ ամբողջ Քարթլիս Յխովրեբայի հեղինակը Զուանքերն է եղել, ընդհակառակը, նրան միայն մի մասն է վերագրվում: Հիշատակարանի մեջ մասնանշած «Պատմութիւն համառաւա»-ը ոչ թե Քարթլիս Յխովրեբային, այսինքն՝ վրաց Պատմությանն է վերաբերում, այլ Արշիլի վկայարանության գրքին և այդ պատճառով էլ չի կարելի արդարացնել հրատարակիչ Ա.թ. Թիրոյանին այն բանի համար, որ նա հրատարակած գրքին տվել է վերոհիշյալ վերնագիրը:

Ա.թ. Թիրոյանի խմբագրությամբ լույս տեսած «Վրաց Պատմության» տեքստը բավական մեծ պակասություններ ունի: Առաջինն այն է, որ տեքստը հաջող օրինակից չի գալիս: Ինչպես տեսել ենք, Կ. Բաղրա-

տունու օրինակը՝ ամենահին օրինակի հետ համեմատած՝ պակաս բառեր ու խոսքեր ունի: Այս բոլորն ինքն ըստ ինքեան կրկնելով մե՛, բացի դրանից, ընդօրինակողի անուշադրության հետևանքով՝ հրատարակությունից դուրս է ընկել մի ամբողջ թերթ:

Չնայած այս թերություններին՝ հիշյալ հրատարակությունը, Մ. Բրոսեի հրատարակած ֆրանսերեն թարգմանության հետ միասին¹⁾, մեծ գեր է խաղացել: Ակադ. Մ. Բրոսեի աշխատություններից հետո վերջնականապես խախտվեց այն գիտնականների կարծիքը, որոնք դանում էին, որ Քարթլիս Յխովրեբան կազմված է XVIII դարի սկզբին, Վախտանգ VI-ի ու նրա հանձնաժողովի կողմից, թեպետ՝ գիտնականներից ոմանք այժմ, Քարթլիս Յխովրեբայի հայերեն խմբագրությունը հրատարակվելուց հետո, գրությունն այնպես են ներկայացնում, իբր թե Վախտանգ VI-ը Քարթլիս Յխովրեբա»-ն կազմելու ժամանակ օգտագործել է այդ հայերեն խմբագրությունը:

Վրաց Պատմության հայերեն խմբագրության հրատարակումից հետո վրացերեն ու հայերեն խմբագրությունների հարաբերությունների շուրջը եղած աշխատանքը բավական աշխուժացավ: Առաջինը, որ զբաղվեց այդ հարցով, պրոֆ. Բ. Պատկանյանն էր: Նա իր աշխատության մեջ՝ «Ванские надписи и значение их для истории персидской Азии: о древне - грузинской хронике» զանազան պատմագրական կարգի հարցեր լուսարանեց, որոնցից մի քանիսը հիմա էլ ընդունելի են: Նա համեմատության նութարկեց միմիայն Քարթլիս Յխովրեբայի սկիզբը, որ ինչպես հիմա արդեն պարզված է, Լեոնտի Մրովելու երկն է՝ «Վրաց թագավորների և նախահայրերի պատմությունը»: Պատկանյանի գաղափարը «Քարթլիս Յխովրեբայի» մասին դրական չէր: Նրա գլխավոր սխալն այն է, ու նա Քարթլիս Յխովրեբային նայում էր իբրև մի ամբողջական երկի և ոչ թե զանազան երկերից

¹⁾ M. Brosset, Chronique Arménienne; additions et éclaircissements à l'histoire de la Géorgie SPB, 1851.

կազմված ժողովածուի վրա, և այսպիսով ամբողջությամբ մասին դատում էր միայն մի մասի վերլուծմամբ:

Վրաց դիտական աշխարհից հիշյալ հարցով զբաղվողներից պիտի հիշատակել պատմաբան պրոֆ. Յուստինե Աբուլաձեին¹), ու ակադ. Ի. Ջավախիշվիլուն²): Մասնագետներն առանց բացառության հաստատում են, որ Քարթլիս Յխովրեբայի հայերեն խմբագրությունը թարգմանված է վրացերենից: Հայերեն խմբագրության ամենահին օրինակը վերագրում են XIII դարին: Համեմատելով այս խմբագրությունը Քարթլիս Յխովրեբայի վրացերեն խմբագրության հետ, որի ամենահին օրինակներն ուշ ժամանակների արտագրություններ են, երևում է, որ հայերենը բավական համառոտ է: Այս երևույթը պատճառ դարձավ, որ հետազոտողներից ոմանք ենթադրեն, թե սկզբում վրացերենում ևս հայերենի նման խմբագրություն է եղել:

Այս կարծիքն են հայանել վերահիշյալ դիտականներից Ք. Ժորգանիան և Յ. Աբուլաձեն: Սակայն ակադ. Ի. Ջավախիշվիլին Քարթլիս Յխովրեբայի հայերեն խմբագրությունը համարում է վրացերենից համառոտված թարգմանություն: Ինչ վերաբերվում է թարգմանության ժամանակին, ակադ. Ջավախիշվիլին, հավառակ Ք. Ժորգանիայի, Յ. Աբուլաձեի և ուրիշների, որոնք այս թարգմանությունը XII դարին են վերագրում, Բրոսեի և այլ դիտականների նման կարծում է, որ թարգմանությունը XII դարի դործ պիտի լինի:

Պրոֆ. Յ. Աբուլաձեն փորձեց նույնիսկ հայերենի հրատարակված տեքստի ազավագումներն օղղել, սակայն այս փորձը, ինչպես հիմա է պարզվում, հաջող չէ: Հիմա մենք ի դեմս ամենահին ձևագրի, ունենք Քարթլիս Յխովրեբայի համեմատաբար լավ օրինակ, որի հետ համեմատելով պրոֆ.

Աբուլաձեի ուղղված տեղերը՝ տեսնում ենք, որ այդ ուղղումները մեծ մասամբ հիշատակում են:

«Քարթլիս Յխովրեբայի» վրացերեն տեքստի այն տեղերը, որոնց մեջ կան տեղեկություններ հայերի և Հայաստանի մասին, վերջին ժամանակներս թարգմանված են հայերեն պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի կողմից³): Նա իր թարգմանած հատվածների կողքին դեպի նույնպես այդ հատվածների համապատասխան տեղերը Քարթլիս Յխովրեբայի հին հայերեն թարգմանությունից: Հին հայերեն թարգմանությունը, ինչպես ինքը՝ Մելիքսեթ-բեկն է ասում, բերված է իր թարգմանության կողքին, «որպեսզի դրանով, մեկ կողմից, դյուրություն տված լինի ընթերցողին՝ կարևոր համեմատություններ կատարելու համար, և մյուս կողմից՝ ցույց տա, թե XII դարի հայերեն թարգմանությունը որքան է շեղվում բնագրից և, ուրեմն, որքան հավատ կարելի է ընծայել վերջինիս»: Այս կամ այն խնդիրներ լուծելիս...»: Շեղումներ ցույց տալու ժամանակ պրոֆ. Լ. Մ-բեկը երևի չի համաձայնում որոշ տեղերում հին թարգմանչի հետ ու տեղ-տեղ տարբեր, սակայն անհիշա կերպով է տալիս թարգմանությունը, որ և կապացուցվի ստորև:

Այս է դիտավորապես այն հիմնական աշխատանքը, որ կատարված է մինչև օրս Քարթլիս Յխովրեբայի հայերեն ու վրացերեն խմբագրությունների շուրջը:

Այժմ անցնենք մեր դիտողություններին.

«Քարթլիս Յխովրեբայի» խմբագրությունը, կամ Վրաց Պատմությունը, վրացերենից է թարգմանված: Այս հաստատվում է ոչ միայն տառադարձության ժամանակ տեղ դասած նման տառերի շիտթմամբ, այլ որոշ nonsens-ներով, որոնք միայն վրացերենից կարող էին առաջացած լինել: Թարգմանությունը տեղ-տեղ համընկնում է վրացերենի հետ, տեղ-տեղ հեռա-

¹) Յուստ. Աբուլաձե, «Վրաց մատյանի հին հայկական թարգմանություն» (վրացերեն), Կ. Մոզգաուրի» ամսագրի, 1901:

²) Իվ. Ջավախիշվիլի, «Հին վրացերեն պատմական գրականություն» (վրացերեն), I հրատ., 1916:

³) Պրոֆ. դ-ր Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց պոլյուրները Հայաստանի և հայերի մասին, Լ. Երևան, 1934:

նում է բնագրից, կան նաև բաց թողնված կամ ավելացված որոշ տեղեր: Ավելացված են այնպիսի մոմենտներ, որոնք չեն կարող վրացերենում եղած լինել: Ինչպես երևում է, թարգմանիչը որոշ նկատառումով է պահանջնում և ավելացնում այս կամ այն մոմենտը:

Քարթլիս Յխովրերայի հայերեն ընտրովի թարգմանությունը սկզբնական մասում ավելի քիչ է համառոտված (Անտի Մրովելու և Ջուանչիբի երկերում): Այս մասից բաց չի թողնված որևէ մի ուշագրավ երևույթ:

Բազմաթիվ մոմենտներ, որոնք կամ շատ են սղմված, կամ հաճախ բաց են թողնված, մեծ մասամբ վերաբերում են «Քարթլիս Յխովրերայում» տեղ դրած ուրիշ երկերի, առանձնապես «Քարթլի մատյանին» ու «Դավիթ Շինողի պատժությունը»: Այս մասերից, այսինքն՝ վերջին երկու երկից, հայերեն խմբագրություն մեջ չեն երևում, ինչպես արդեն ուրիշներն էլ են նկատել, ոչ միայն ժամանակագրական ընտել կրող տեղեկությունները, այլ և շատ այնպիսի դեպքեր, որոնք Վրաստանի ներքին կյանքին են վերաբերում և ոչ մի կապ չունեն դրսի աշխարհի հետ: Հենց այսպիսի սպալորություն ենք ստանում, երբ մանրամասնորեն ծանոթանում ենք այս երկերի վրացերեն ու հայերեն տեքստի հետ: Այն հանգամանքը, որ այս հուշարձանները համեմատաբար մեծ չափով են համառոտված, իմ կարծիքով, ոչ թե այն բանով է բացատրվում, որ հայերենի նման ինչ-որ համառոտ խմբագրություն պիտի դրություն ունենար վրացերենում, այլ նրանով, որ հայ թարգմանիչը այս դեպքում ուրույն տեսակետով է առաջնորդվել: Ծանկանալով տալ հայ ընթերցողին Վրաց պատմության գիրքը՝ թարգմանիչն աշխատում է Քարթլիս Յխովրերայի մեջ զետեղված գրքերի բովանդակությունը հարմարեցնել սպառողական միջավայրին:

Քարթլիս Յխովրերայի մեջ ամփոփված երկերում պատմված դեպքերը նա հայ ընթերցողին տալիս է ոչ թե ամբողջությամբ և մանրամասնորեն, այլ ընտրելով միայն պիտանքն ու համառոտելով: Վերցնում է

այնպիսի դեպքեր, որոնք որևէ կերպ կամ հայոց պատմության եղելությունների հետ են կապված, կամ հիշեցնում են այդպիսիները: Բաց չի թողնում այնպիսի տեղեր, որտեղ այսպես թե այնպես հայ է մասնակցում: Եվ եթե որևէ մի ստվեր է ընկած նման դեպքերում հայ գործչի վրա, հայ թարգմանիչն աշխատում է որևէ կերպ մեղմացնել այն, կամ բոլորովին հանել կամ թե, լավագույն դեպքում, այնպես փոխել, որ ընդունելի լինի հայ ընթերցողին:

Այս բոլորից հետո մեզ թվում է, որ Վրաց Պատմությունը ոչ թե հասարակ թարգմանություն է, այլ մի համառոտություն է, որ կատարված է որոշ աշխարհահայացք ունեցող անձնավորության ձեռքով, որոշ նպատակով:

Ո՞վ պիտի լինի թարգմանիչը և ի՞նչ աշխարհայացքի տեր: Քարթլիս Յխովրերայի կամ Վրաց Պատմության թարգմանիչն անշուշտ հայ է: Այս է վկայում թեկուզ այն, որ Նունի մասին վրացերենում ասված է, որ նա «մայրն և ավագանն է մեք», իսկ հայերենում՝ դրատեղը կարգում ենք «մայրն Վրաց»: Հայ թարգմանիչը, ինչպես պարզվում է, միաբնակ է, և այս շատ պարզ երևում է այն հավելվածներից, որ թարգմանիչն է կատարել: Օրինակ՝ երբ թարգմանիչը Վասիլ կայսեր կողմից Բագրատ արքայորդուն պատանդ տանելու դեպքն է վերցնում, ահամա հիշում է այն եղելությունը, որ նույն Վասիլ կայսրը ջուր օրհնելու համար կանչեց հայ կաթողիկոս Պետրոսին, «կոչեցեալ առ ինքն դեմն կաթողիկոս Հայոց զՊետրոս... և ետև կայսրն մեծ սքանչելիս ի վերայ ջրոյն, և գովեաց զհավատս Հայոց»: Նույնն է հաստատում և այն նկարագրությունը, որ կատարում է թարգմանիչը վրացական-հայկական եկեղեցական բանավեճի առթիվ, ներկայացնելով այն վրացերեն տեքստին միանգամայն հակառակ:

«Քարթլիս Յխովրերայի» հայ թարգմանիչը մտցնելով դեպքեր, որոնք չկան վրաց բնագրում, ցույց է տալիս, որ ինքը քաջ ծանոթ է հայերեն պատմական գրականության հետ: Այսպես, օր. երբ Ջուանչիբի երկից վերցնում է ներքոթի մասին պատ-

մածը, ավելացնում է, որ Պարսից «Բէլ, որ նա ինքն է ներբովթ, որ կռաւնոսն կոչի՝ աղատեալ է...»: Բեյլի ու ներբովթի նույնությունը, ինչպես պարզվում է, վերցված է Մովսես Խորենացուց, որտեղ (I, գր. 7) տաված է՝ «Բայց ես ասեմ զհըրոսնոսդ անուն զԲէլ, ներբովթ լիալ»: Բայցի Խորենացուց՝ թարգմանիչը ծանոթ է Սերետի Պատմության հետևա՝ Մահմետի երկալու պատմությունը նույնպես հայկական աղբյուրներից է վերցված: Ի միջի այլոց, նրա պատմածն այս տեսակետից շատ նման է Սամվել Անեցու ու Մխիթար Անեցու պատմածներին: Պետրոս կաթողիկոսի սքանչելագործության մասին եղած հատվածն էլ (որը թարգմանիչն իր թարգմանություն մեջ է մտցնում) հայկական աղբյուրից է բղխում, և փոխ է առնված «Կողեանի Տեսլեան» հեղինակից¹) և այն և այլն:

Այսպիսով «Քարթլիս Յխովրերայի» հայերեն համառոտության թարգմանիչ = խըմբագիրը հայ է, միաբնակ իր դավանությունը և բավական լավ ծանոթ ինչպես հին, նույնպես էլ ժամանակակից հայկական պատմության հետ:

Ե՞րբ է կատարված Վրաց պատմության թարգմանությունը:

Թարգմանությունն ընդհատված է 1125թ. դեպքով, այս խակ թիվը պետք է համարել թարգմանության terminus à quo-ն: Ճիշտ է, հայերեն թարգմանությունն անսովոր կերպով «նստուց» բառով է ընդհատվում, բայց այս բառից հետո տեքստը չպետք է շարունակվեր, ընդամենը մի քանի տող պիտի լիներ, որովհետև «Պավիթ Շինողի պատմությունը» ընագրի՝ այսինքն՝ «Քարթլիս Յխովրերայի» վերջին երկն էր, ինչպես այս հաստատել է ահադ. Ի. Ջավախիշվիլին:

Ինչ վերաբերում է terminus ad quem-ին, մասնագետները մեծ մասամբ իբրև այդպիսին ընդունում են XIII դարը: Իմ կարծիքով, այս երկրորդ սահմանադիժը հեռու է տարված: Արդեն պատմաբան Թ.

Ժորդանիան Քարթլիս Յխովրերայի հայերեն խմբագրության ֆրանսերեն թարգմանության մեջ նկատել է մի տեղ, որից, նաև մեր կարծիքով, երևում է, որ թարգմանիչը Պավիթ Շինողի ժամանակակից է, ամենաշատը՝ կրտսեր ժամանակակից: Երբ թարգմանիչը, իբրև հավելված, Սարկավազի և Պավիթ արքայի մտերիմ հարաբերության մասին է խոսում, գրում է. «Եւ տեսաք արգեսմը կատարեալ դրան սաղմոսին [որով Սարկավազն էր դիմում արքային] ի վերայ թագավորին, և յուրվք ի բանից անտի վայելին նմա». և հետո թարգմանիչը թվում է այն փորձանքները, որոնցից անվնաս մնաց Պավիթ արքան և որոնց մասին խոսում է նաև բնագիրը:

Պավիթ շինողի պատմության գրելու ժամանակը ահադ. Ի. Ջավախիշվիլին համարում է 1123—1126 թ. որ և ընդունում են ուրիշները: Պարզ է, որ Քարթլիս Յխովրերայի մեջ այս պատմությունը մտած պիտի լինի այդ ժամանակից հետո: Հայ թարգմանիչը արդեն ձեռքի տակ է ունեցել այնպիսի ձեռագիր, որի մեջ զետեղված է եղել հիշյալ պատմությունը: Թարգմանիչը Պավիթ արքայի վերջին օրերին աղանատես է եղել, ուրեմն և իբրև կրտսեր ժամանակակից, նա Քարթլիս Յխովրերայի մեջ զետեղված Պավիթ արքայի պատմությունը կարող էր թարգմանել XII դարի միայն երկրորդ կիսում:

Վրաց Պատմության հայերեն խմբագրությունը, չնայած այն հանգամանքին որ նա՝ իր աղբյուրի հետ համեմատած՝ համառոտ է, կարող է որոշ գաղափար տալ այդ աղբյուրի, այսինքն՝ «Քարթլիս Յխովրերայի» առաջին վրացերեն խմբագրության կազմության մասին, որից հին ձեռագրերը մեզ չեն հասել: Թոսելով հայերեն, խմբագրության համառոտ լինելու մասին, նկատի պիտի ունենանք այն, որ նրա համառոտությունը ոչ թե նրա մեջ տեղ դրած երկերի թվի նվազեցում է նշանակում, այլ այդ երկերի բովանդակության սղում:

Երբ «Քարթլիս Յխովրերայի» հայերեն խմբագրության համեմատ ուսումնասիրում ենք այս հուշարձանի վրացերեն հին օրինակները (XV—XVII դ. դ.), նախ և առաջ ուշադրություն է դրավում այն, որ XII

¹ Н. Я. Марр, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерие (из сборника „Восточные записки“, СПб, 1895).

դարի վրացերեն Քարթլիս Յխովրերան բաղկացած է կղել հետեյալ երկերից. 1) Լեոնտի Մրովելու Վրաց թագավորների և նախահայրերի պատմութիւնը. 2) Զուանշիրի՝ Վախտանգ Գորգասայի պատմութիւնը. 3) Արշիլի վկայարանութիւնը. 4) Քարթլի մատյանը և 5) Դավիթ արքայի պատմութիւնը:

Երկրորդ աչքի ընկնող երևույթը, ինչպես դեռ Թ. Ժորգանիան է նկատել, այն է, որ հայերեն «Վրաց Պատմութիւն» մեջ Նունի վարքը պատմված է առաջին դեմքով, այն ժամանակ երբ Քարթլիս Յխովրերայի մեզ հասած վրացերեն հին ձեռագրերի մեջ նույն պատմութիւնը ներկայացված է երրորդ դեմքով: Թ. Ժորգանիան կարծում էր, որ հայերեն թարգմանութիւն մեջ հիշյալ վարքը Նունի աչքի կոչված, «Նոր վարիանտից» է գալիս, և ոչ թե երկրորդից: Այն ժամանակ «Նոր վարիանտ» կոչվում էր X դ. ձեռագրի՝ «Շատրերգի ժողովածուի» մեջ գեանդված Նունի վարքը, իսկ երկրորդ՝ Լեոնտի Մրովելու ձեռքով կազմված վարքը: Բայց Նունի վարքի վրացերեն տեքստերի ուսումնասիրութիւնը՝ Վրաց Պատմութիւն հայերեն խմբագրութիւն մեջ գտնվող վարքի առնչութիւնը՝ պատմաբան Ժորգանիայի արտահայտած կարծիքը չի արդարացնում: Նունի վարքի հայերեն թարգմանութիւնը մոտիկ հարաբերութիւն ունի Քարթլիս Յխովրերայի մեջ տեղ գրաված Լեոնտի Մրովելու կողմից կազմված վարքի հետ, և

այն հանգամանքը, որ թարգմանութիւն մեջ վարքը պատմվում է առաջին դեմքով, իսկ վրացերենում (մեզ հասած Ք. Յ. ի հին ձեռագրերում) երրորդ դեմքով, բայց ինչպիսիք է նշանակում, որ Քարթլիս Յխովրերայի XII դարի վրացերեն խմբագրութիւն մեջ ևս Լեոնտի Մրովելու ձեռքով կազմված Նունի վարքը նույնպես առաջին դեմքով է կղել շարադրված և հետագայում միայն խմբագիրների կողմից զարծվել է երրորդ դեմքով:

«Քարթլիս Յխովրերայի» հայերեն հին թարգմանութիւնը վրացերեն բնագրի համար, բացի վերոհիշյալ կողմերից, ունի մինչև նշանակութիւն ևս: Այդ արդեն լեքսիկային է վերաբերում: Քարթլիս Յխովրերայի վրացերեն տեքստի մեջ պատահում են այնպիսի բառեր, որոնց գործածութիւնը հազվագյուտ է հին վրացական տեքստերում: Այս տեսակի բառերի իմաստը ճշտորեն սահմանելու համար անգնահատելի օժանդակութիւն է ցույց տալիս մեզ հայերեն հին թարգմանութիւնը: Պիտի ասել, որ թարգմանիչը, չնայած այն սակավաթիվ nonsens-ներին, որոնք տեղ են գտել նրա թարգմանութիւն մեջ, գլխավորապես բնագրի օրինակի շնորհիվ (երևի ձեռագիրը լավ չէր կարդացվում), լավ է տիրապետում վրացերեն լեզվին: Նույն իսկ բոլոր հազվագյուտ բառերը, որոնք կան Քարթլիս Յխովրերայի տեքստում, թարգմանիչը ճշտութեամբ է հասկացել Այդպիսիքն են՝

კნისობა («կնիսոր»), որը թարգմանված է «զբաւսանք» բառով:	
უძლები («ուձլերի»), » » » «յղի» »	
ჩუგლუვი («չուգլուգի»), » » » «երկաթալուռ մահակով».	
ხანდაკი («խանդակի») » » » «խոր փոս» բառով	
ხოსტაკი («խոստակի») » » » «գանձ, ստացվածք, տուրք կամ խաշն» բառերով:	
სევვე («սեխ») » » » «արքունիք» բառով	
კილიკი («կիլիկի») » » » «մահիճ» »	
არძანვი («արձանիգի») » » » «արժի» » և այլն:	

Իմ կարծիքով, սխալվում է, պրոֆ. Լ. Մելիքսեթրեկը, երբ իր թարգմանած հատվածների մեջ վերոհիշյալ բառերից մի քանիսը և այլ բառեր, որոնք հաճախ են գոր-

ծածված հին վրացերենում, այնպես չի թարգմանում, ինչպես հին թարգմանիչը, այլ տալիս է ուրիշ անհաջող և անճիշտ բառերով: Երևի, նա նպատակ է ունեցել ցույց տալ հին թարգմանիչի «շեղումների»

մի կողմը: Բայց ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ հին թարգմանիչը ավելի լավ է հասկացել ընդհանրապես բնագիրը և մասնավորապես այժմ մեզ համար դժվար բնութեան տեղերը, քան թե նոր թարգմանիչը: Դիմենք փաստերին.

շոժոցձո («ուձլքի») պրոֆ. Լ. Մ.-Բ-ը թարգմանում է «տկար» բառով, երբ այն նշանակում է՝ «յղի» (հին թարգմանիչը հենց այս բառով է թարգմանել):

սրժանցո («արժանգի») նոր թարգմանիչը թարգմանում է «երիցութիւն» բառով, երբ նա նշանակում է «արժանիք = արժեք» (հին թարգմանիչը այս բառն էլ լավ է հասկացել, դնելով դրա փոխարենն՝ «արժեք» բառը):

հյոժոժո («եդ'որա») բառը, որը նշանակում է «պատերազմել», շփոթելով նոր վրացերենի նշանակութեան հետ, նոր թարգմանիչը թարգմանում է իբրև «կարգի կանչել»:

ևոջցլո («սոփելի») բառը, որ՝ հին վրացերենում, նշանակում է «աշխարհ» իսկ նորում՝ «գյուղ», նույնպես մի տեղ Մ.-Բ-ը թարգմանել է «գյուղ» բառով («ձուլ-լոլա մոտցորոտա ևոջցլոնստա») = «գիմեց գյուղապետներին» ?!)

ցրոնտաձո («էրխթավի») «իշխան» բառով է թարգմանված, մինչդեռ այն նշանակում է՝ «գորագլուխ»:

ցանցլո (« գանցդա»), որ նշանակում է «տեսնել», թարգմանված է «հարձուփորձի ենթարկել» դարձվածքով, դարձյալ շրջափոթելով նոր վրացերենի հետ:

սեղոս («ախումա») բայ, որ նշանակում է «ընդունել կամ վերցնել» և այն էլ ոչ թե մեկը, այլ շատ, պրոֆ. Լ. Մ.-ը թարգմանում է «բաժանվել» բառով, որ նույնպես սխալ է և այն:

«Վրաց պատմութեան» մեջ, ինչպես ըստ պատելի է, կան այնպիսի բառեր, որոնք սովորական չեն հին հայերենում: Այս տեսակետից մեր հուշարձանը ուսումնասիրութեան առարկայ դարձավ պրոֆ. Լ. Աճառյանի կողմից, որն իր «Հայերեն նոր բառեր հին մատենագրութեան մեջ (Ս հատ. Վենետիկ 1913—1922) գրքում առանձին գլուխ է նվիրում «Վրաց պատմութեան»-ը հետևյալ վերնագրով. «Հայերեն նոր բառեր

Ձուանչիրի Վրաց պատմութեան մեջ» (ղ. ԻԴ):

Հիշյալ հոդվածի մեջ ստուգարանված են միայն հետևյալ 4 բառերը՝ պատանիկ, սեմփոր, սրահանգ ու փրոտիտոսիկ: Պատանիկ ու սրահանգ բառերի մասին տված բացատրութեանները ճիշտ են, բայց կասկած է հարուցում միայն «սեմփոր» և «փրոտիտոսիկ» բառերի մեկնաբանութեանը: «Սեմփոր», որ Վենետիկի հրատարակութեան մեջ «սեմփոր» ձևով է ներկայացված («և եղև ի նոսա ախա սեմփորի») պրոֆ. Աճառյանի կարծիքով հունարենից է վերցված, ուր *συνεργή* (կամ *συνεργά*) նշանակում է reunion, rencontre des maladies: Վրացերեն բնագրի հետ համեմատելով այս բառի համարժեքն է «ևնճոժո քյուլլոնս», որ նշանակում է՝ «ախա փորի»: Այստեղից երևում է, որ «սեմփոր» (ամենահին ձևագրի մեջ «սեմփոր») բարդ բառ է, բաղկացած երկու բառերից՝ մեկը «սեն» ու մյուսը՝ «փոր», որով արտահայտված է վրացերենի «ևցնո» (կամ «ևցնճո») քյուլլոնս» միայն այնպես, որ առաջին բառը թարգմանված չէ:

«Փրոտիտոսիկ» բառը պրոֆ. Լ. Աճառյանը հունարեն *προτοπρωτος*-ի հետ է կապում, որը հայերենում պիտի տար «փրուրիտոսիկ» ձևը, բայց «Լ» և «Ր» տառերի միացմամբ առաջացած է երևում «փրոտիտոսիկ», որ և մեկնողի առաջարկութեամբ պիտի ուղղվի: Կարող է այս բառի ստուգարանութեանը ճիշտ լինել, բայց սրա սրբխալ ձևը ոչ թե հայերենի հիման վրա է ըստացված, այլ սրա փոփոխութեան պատճառը վրացերենում պիտի փնտռել, որովհետև հիշյալ ձևով այս բառը վրացերեն բնագրից է անցել հայերեն թարգմանութեան մեջ: Վրացերենում համապատասխան տեղում ունենք «ցրոլոլոտոսկամ», «ցրոլոլոտոս», բառը, որ հայերեն թարգմանութեան մեջ «փրոտիտոսիկ» ձևով է ներկայացված:

Վերջացնելով մեր գիտողութեանները «Քարթլիա Յիսուփրեբայի» հայերեն թարգմանութեան մասին՝ մեզ մնում է միայն ամփոփել մեր վերևում ասածները.

«Քարթլիա Յիսուփրեբայի» այսինքն Վրաց պատմութեան մեջ հասած հայկական

ձեռագրերից միայն 4 օրինակներ կան, որոնք անհրաժեշտ են վերոհիշյալ Պատմութեան հայկական բնագիրը վերականգնելու համար:

2. Ամենահին ձեռագիրը, որ գրված է համարվում XIII դարի վերջին, լիովին չի պահպանում սկզբնագիրը:

3. «Քարթլիս Յխովրեբայի» հին հայերեն խմբագրութեանը թարգմանված է վերացերենից: Թարգմանութեանը համառոտ է, ունի և հավելվածներ, թե՛ մեկը, թե՛ մըյուսը կատարված են որոշ նկատառումներով:

4. Թարգմանիչը հայ է, դավանանքով միաբնակ, և Դավիթ Շինողի կրտսեր ժամանակակից: Թարգմանութեանը կատար-

ված պիտի լինի XII դարի երկրորդ կեսում:

5. Քարթլիս Յխովրեբայի հայերեն թարգմանութեանը օժանդակում է մեզ որոշ գաղափար կազմելու Քարթլիս Յխովրեբայի մեր ձեռքը չհասած հին վրացերեն առաջին խմբագրութեան կազմութեան մասին:

6. Քարթլիս Յխովրեբայի հայերեն հին թարգմանութեանը օժանդակում է մեզ ճշգրիտ սահմանելու վրացերեն տեքստի՝ հընում հազվագյուտ գործածութեան ունեցող բառերի իմաստը: Իր հերթին՝ վրացերեն տեքստի օգնութեամբ՝ հայերեն թարգմանութեան մեջ վերականգնվում են որոշ բառերի ճիշտ ձևերն ու իսկական իմաստը: